



Հայաստանի կենսաբ. հանդես, 3 (73), 2021

ՏԱԲԴԵՂԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հ.Լ.ԹԵՐԼԵՄԵԶՅԱՆ, Մ.Յ. ՂԱԶԱՐՅԱՆ

Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և
վերլուծության գիտական կենտրոն
Հայաստանի ազգային ագրարային համալսարան
hlt_arm@yahoo.com, Maga-ghazaryan@mail.ru

Հոդվածում ներկայացված է բաց դաշտի պայմաններում տաքդեղի վրա արձանագրված վնասատուների տեսակային կազմը: Ընդհանուր առմամբ բացահայտվել են 59 տեսակներ, որոնք պատկանել են 9 կարգերի: Դրանց մեջ առավել զգալի տեսակային կազմով առանձնացել են թեփուկաթևների կարգի ներկայացուցիչները (17 տեսակ), որոնցից 2-ը տաքդեղի գլխավոր վնասատուներն են (բամբակենու կնգուղակեր՝ *Helicoverpa armigera*, և կարադրինա՝ *Spodoptera exiqua*):

Բացահայտված վնասատուներից 7-ը Հայաստանում արձանագրվում են առաջին անգամ, իսկ 8 տեսակի վնաս առաջին անգամ մեր կողմից է նշվում որպես տաքդեղի վնասատու:

Տաքդեղ – վնասատու – հետազոտություն – տեսակային կազմ

В статье представлен видовой состав вредителей на перце, зарегистрированных в условиях открытого грунта. В основном выявлено 59 видов, относящихся к 9 категориям. Среди них наиболее заметными были представители отряда чешуйчатых (17 видов), 2 из которых являются основными вредителями перца (*Helicoverpa armigera* и *Spodoptera exiqua*).

Впервые в Армении зарегистрированы 7 видов из обнаруженных вредителей, а 8 видов упоминаются нами впервые, как вредители перца.

Перец – видовой состав – исследования – вредитель

The article presents the species composition of pests on capsicum, recorded in open field conditions. A total of 59 species belonging to 9 categories were identified. Among them a substantial composition of the representatives of Lepidoptera stood out (17 species), 2 of which are the main pests of capsicum (*Helicoverpa armigera*, *Spodoptera exiqua*). 7 of the detected pests are registered in Armenia for the first time, and 8 types of damage are mentioned by us for the first time as capsicum pest.

Capsicum – species composition – research – pest

Հայաստանում բանջարաբուծությունը գյուղատնտեսության առաջատար և եկամտաբեր ճյուղերից է: Տաքդեղը ՀՀ-ում առավել տարածված բանջարանոցային մշակաբույսերից մեկն է: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության՝ 2019 թվականի տվյալների համաձայն՝ բանջարանոցային մշակաբույսերի մշակության տարածքներն ընդհանուր առմամբ կազմել են 20616 հա, որից շուրջ 2000 հեկտարը զբաղեցնում են

տաքդեղի ցանքատարածությունները: Բանջարանոցային մշակաբույսերի մեջ տաքդեղի արտադրությունը զբաղեցնում է երրորդ տեղը՝ զիջելով միայն լոլիկին և կաղամբին:

Տաքդեղը պարունակում է շաքարներ, սպիտակուցներ, վիտամիններ՝ C, B1, B2, P, կարոտին (A-նախավիտամին): Զիմիական կազմը խիստ փոփոխական է՝ կախված սորտից, հասունության աստիճանից և աճեցողության պայմաններից: Չոր նյութերի քանակը տատանվում է 5-12 %-ի սահմաններում, շաքարները կազմում են 2-8,6 %, թաղանթանյութը՝ 1,06-1,16 %, մոխիրը՝ 0,077-1,9 %: Պտուղների կծվությունը պայմանավորված է կապսահինի ալկալոիդով, որը կազմում է չոր նյութերի մոտավորապես 2 %-ը: Ըստ կապսահինի քանակի՝ տաքդեղի սորտերը ստորաբաժանվում են քաղցր, կիսաքաղցր և կծու տեսակների: Տաքդեղի ամենաարժեքավոր հատկություններից մեկը մեծ քանակով C վիտամին պարունակելն է

/ <https://hy.wikipedia.org/wiki/%D5%8F%D5%A1%D6%84%D5%A4%D5%A5%D5%B2/>:

Վեգետացիայի ընթացքում տաքդեղին մեծ վնաս են հասցնում վնասատուները, որոնց վնասի հետևանքով տեղի է ունենում բերքի որակի և քանակի նվազում:

Նյութ և մեթոդ: Հետազոտության նպատակն է ՀՀ Արմավիրի մարզի պայմաններում ուսումնասիրել տաքդեղի վնասատուների տեսակային կազմը: Երթուղային հետազոտություններն իրականացվել են 2019-2020 թվականներին, ամեն շաբաթ, իսկ մշտական հետազոտությունների վայրում (խորոնք)՝ շաբաթը մի քանի անգամ: Դիտումների ընթացքում հայտնաբերված վնասատուները ֆիքսվել են միջատաբանության մեջ ընդունված մեթոդների համաձայն:

Վնասատուների տեսակային կազմի նույնականացումն իրականացվել է «Սննդամթերքի անվտանգության ոլորտի ռիսկերի գնահատման և վերլուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի և «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի» մասնագետների օգնությամբ:

Արդյունքներ և քննարկում: Արմավիրի մարզի տարբեր համայնքներում կատարված հետազոտությունների ընթացքում պարզաբանվել է տաքդեղի վնասատուների տեսակային կազմը: Ուսումնասիրությունների արդյունքում մեր կողմից արձանագրվել է ֆիտոֆագերի 59 տեսակ, որոնց մեջ կան այնպիսի տեսակներ, որոնք Հայաստանում առաջին անգամ են նշվում, ինչպես նաև կան տեսակներ, որոնք վնասը տաքդեղի վրա առաջին անգամ է արձանագրվում: Վնասատուների տեսակային կազմը ներկայացված է ստորև:

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, տաքդեղի վրա արձանագրված վնասատուները պատկանում են 9 կարգերի, որոնց մեջ առավել զգալի տեսակային կազմով առանձնանում են թեփուկաթևների (Lepidoptera) կարգի ներկայացուցիչները՝ 28,9% (կամ 17 տեսակ), այնուհետև ուղղաթևների (Orthoptera) և հավասարաթևների (Homoptera) կարգերի ներկայացուցիչները, յուրաքանչյուրը՝ 15,2% (կամ 9 տեսակ), կարծրաթևները (Coleoptera)՝ 13,5% (կամ 8 տեսակ), կիսակարծրաթևները (Heteroptera)՝ 11,9% (կամ 7 տեսակ), երկթևները (Diptera)՝ 6,8% (կամ 4 տեսակ) փորոտանիները (Gastropoda) և ծոպաթևները (Thysanoptera), յուրաքանչյուրը՝ 3,4% (կամ 2 տեսակ) և տզերը (Acarina)՝ 1,7% (կամ 1 տեսակ):

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ապացուցվել է, որ տաքդեղին առավել զգալի վնաս են հասցնում բամբակենու կնգուղակները և կարադրինան: Տաքդեղի վրա արձանագրված 59 տեսակ վնասատուներից 7 տեսակը Հայաստանում արձանագրվում է առաջին անգամ, դրանք են *Nephrotoma appendiculata*-ն, *Balclutha impicta*-ն, *Empoasca fabae*-ն, *Tyta luctuosa*-ն, *Aporodes floralis*-ը, *Helcystogramma triannulella*-ն, *Emmelina monodactyla*-ն:

Աղյուսակ 1. Տարբերիչ վնասող ֆիտոֆագերի տեսակային կազմը

Դաս	Կարգ	Ընտանիք	Տեսակ
Միջատներ Insecta	Lepidoptera Թեփուկաթևավորներ	Բվիկներ Noctuidae	Բամբակենու կնգուղակեր <i>Helicoverpa armigera</i>
			Կարադրիմա <i>Spodoptera exiguua</i>
			Աշնանցանի բվիկ <i>Agrotis segetum</i>
			Բացարանոցային բվիկ <i>Lacanobia oleracea</i>
			<i>Prodotis /Grammodes/ stolidia</i>
			Գամմա բվիկ <i>Autographa gamma</i>
			Սուզ բծավոր բվիկ <i>Tyta luctuosa</i>
		Հրաթիթներ Pyralidae	Եգիպտացորենի հրաթիթ <i>Costinina nubialis</i>
			Սարգսգետնի դեղին թիթենիկ <i>Sitochroa verticalis</i>
			Բվիկանման հրաթիթ <i>Nomophila noctuella</i>
			Ծաղկային բվիկանման հրաթիթ <i>Aporodes floralis</i>
			<i>Peoria sp</i>
		Գոգաթև ցեղեր Gelechiidae	Լոլիկի հարավամերիկյան ցեղ <i>Tuta absoluta</i>
			Լոլիկի հարավամերիկյան ցեղ <i>Tuta absoluta</i>
		Մատնաթևեր Pterophoridae	Միամատնյա մատնաթևիկ <i>Emmelinea monodactyla</i>
		Ճերմակաթիթներ Pieridae	Չափրանագույն դեղնուկ <i>Colias crocea</i>
		Տերևաղորներ Tortricidae	Ծեռատող տերևաղոր <i>Clepsis pallidana</i>
	Homoptera Հավասարաթևներ	Իսկական լվիճներ Aphididae	Դեղձենու լվիճ <i>Myzodes persicae</i>
			Բոստանային լվիճ <i>Aphis gossypii</i>
			Ծակնդեղի լվիճ <i>Aphis fabae</i>
		Թզուկ ցիկադներ Cicadellidae	Կանաչ թզուկ ցիկադ <i>Cicadella viridis</i>
			<i>Balclutha impicta</i>
			<i>Empoasca fabae</i>
		Միաողնուց ցիկադներ Cixiidae	Պատառուկի եվրոպական ցիկադ <i>Hyalesthes obsoletus</i>
		Սապատավոր ցիկադներ Membracidae	Գոմշանման ցիկադ <i>Stictoccephala bubalus /bisonia</i>
		Սպիտակաթևիկներ Aleyrodidae	Զերմատնային սպիտակաթևիկ <i>Trialeurodes vaporariorum</i>
	Heteroptera Կիսակարծրաթևներ	Վտուտ մլուկներ Lygaeidae	<i>Lygaeus equestris</i>
		Վահանամլուկներ Pentatomidae	Հատապտուղների վահանամլուկ <i>Dolycoris baccarum</i>
			Սևաբեր վահանամլուկ <i>Carpocoris fuscispinus</i>
			Մանանեխի վահանամլուկ <i>Eurydema ornate</i>
		Կուրամլուկներ Miridae	Դաշտային կուրամլուկ <i>Lygus pratensis</i>
			Ամլուկաձև կուրամլուկ <i>Adelphocoris lineolatus</i>
		Rhopalidae	Տղտղուկի մլուկ <i>Stictopleurus abutilon</i>

Աղյուսակ 1. /շարունակություն/

	Coleoptera Կարծրաթևներ	Տերևակերներ Chrysomelidae	Բանջարանոցային լվիկ <i>Altica cf oleracea</i>
			Կողորայան բզեզ <i>Leptinotarsa decemlineata</i>
			<i>Labidostomis</i> sp
			Հնդկացորենի տերևակեր <i>Gastrophysa polygoni</i>
		Երկարակնճիթներ Curculionidae	Սովորական ֆրաչնիկ <i>Lixus cf iridis</i>
		Anticidae	<i>Anticus</i> sp
		Tenebrionidae Սևամարմիններ	<i>Gonocephalum granulatum pusillum</i>
		Elateridae Չրխաններ	<i>Agriotes sputator</i> Ցանցի չրխան
	Orthoptera Ուղղաթևներ	Իսկական մորեխներ Acrididae	Կապտաթև գամբիկ <i>Oedipoda caerulescens</i>
			Կարմրաթև գամբիկ <i>Oedipoda miniata</i>
			Մարոկկոյի մորեխ <i>Dociostaurus maroccanus</i>
			Բոստանային գամբիկ <i>Thisoicetrinus pterostichus</i>
			<i>Acrida turrita</i>
			Ասիական մորեխ <i>Locusta migratoria</i>
			Իտալական մորեխ <i>Calliptamus italicus</i>
		Արջուկներ Gryllotalpidae	Սովորական արջուկ <i>Gryllotalpa-gryllotalpa</i>
		Ճռիկներ Gryllidae	Տափաստանային ճռիկ <i>Gryllus desertus</i>
	Diptera Երկթևներ	Ականող ճանճեր Agromyzidae	Լոլիկի տերևային ականող <i>Liriomyza sativae</i>
		Tipulidae	<i>Nephrotoma appendiculata</i>
		Ծաղկաճանճեր Anthomyiidae	Ծաղկաճ <i>Delia platura</i>
		Բզգաններ Milesiinae	<i>Cheilosia</i> sp
	Thysanoptera Ծոպաթևներ	Thripidae	Արևմտյան ծաղկային թրիպս <i>Frankliniella occidentalis</i>
		Սարդակերպեր Arachnida	Տզեր Acarina
Սարդակերպեր Arachnida	Տզեր Acarina	Ոստայնավոր տզեր Tetranychidae	Սովորական ոստայնատիզ <i>Tetranychus urticae</i>
Փողոտակներ Gastropoda		Բուլակներ Limacidae	
		Խխուկներ Helicidae	

Արձանագրված ֆիտոֆագերի կարգային պատկանելությունը ներկայացնում ենք ստորև (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ֆիտոֆագերի կարգային պատկանելիությունը

Այսպիսով, 2019-2020 թվականներին Արմավիրի մարզի տարբեր համայնքների տաքդեղի դաշտերում կատարված հետազոտությունների արդյունքում արձանագրվել են 59 վնասակար տեսակներ, որոնցից 56-ը պատկանում են միջատների դասին, 1-ը՝ սարդակերպերի և 2-ը՝ փորոտանիների դասին: Արձանագրված տեսակներից 7-ը Հայաստանում չէին հայտնաբերվում, իսկ 8 տեսակի վնաս առաջին անգամ մեր կողմից է արձանագրվել որպես տաքդեղի վնասատու:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի գյուղատնտեսական կոլտուրաների, անտառների և պահեստների վնասատուները, Երևան, 1976:
2. Определитель насекомых Европейской части СССР. Том 2: Жестокрылые и веерокрылые. Наука, Л., 1965.
3. Определитель насекомых Европейской части СССР. Том 5: Двукрылые, блохи. Наука, Л., 1970.
4. Определитель насекомых Европейской части СССР. Том 4: Чешуекрылые. Наука, Л., 1978.
5. Определитель насекомых Европейской части СССР. Том 4, Чешуекрылые. Наука, Л., 1986.

Ստացվել է 23.06.2021